ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀՐԱՄԱՆ

«16» Նոյեմբերի 2023թ No 5304-Ա

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/44» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության և 2-րդ մասի պահանջները, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածի 26-րդ կետի 10-րդ ենթակետը, ինչպես նաև այն, որ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ն խախտել է ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ չի շտկել իր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը, որոնք ներկայացված էին «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/44» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/44» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ ներկայացրած «Մեդէքսպերտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 04229065, գործունեության հասցեն՝ Արարատի մարզ, Նոր Խարբերդ 1փ., 1նրբ., տ. 31) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 6-ին կայացած բացման և գնահատման նիստին ընդունված որոշման համաձայն՝ ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

16.11.2023

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100